ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 մայիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

74
(2740)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՑԱԽԸ ՄՈՌԱՑԱՆ, ՀԱՍԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Նիկոլ Փաշինյանի՝ մայիսի 22-ի մամուլի ասուլիսից հետո իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները հետեւողական կերպով իրենց հայտարարություններով վերջնական խաչ են քաշում Արցախի վրա: Նախ՝նշենք՝այդ ասուլիսի ժամանակ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականություն ասվածը ենթադրում է նաեւ տեսնել Արցախը, Արարատի մարզի Տիգրանաշենն ու Տավուշի 7 գյուղերն Ադրբեջանի կազմում: Դրանից հետո այս գիծը հետեւողական շարունակում է տարվել՝էլ ավելի տարօրինակ հայտարարություններով: Օրինակ՝ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը, արձագանքելով Փաշինյանի հայտարարություններից հետո լրագրողի դիտարկմանը, թե Արցախում հայեր են ապրում, ասել է. «Արցախում ապրում են մեր հայրենակիցները, Ջավախքում էլ են ապրում հայեր, Բեյրութում էլ են ապրում հայեր, Գլենդելում էլ, Ավստրալիայում էլ: Մեր պետական գործիչների առաջնային խնդիրը ՀՀ շահերի սպասարկումն է, ՀՀ պաշտպանությունը: Պատմական այս հատվածում մենք բոլորով կանգնած ենք այդ երկընտրանքի առջեւ, երբ մեր միտքը եւ սիրտը սկսում են հակասել իրար: Երբեմն Հայաստանի պետական շահերի պաշտպանությունը չի համընկնում հայերի ազգային շահերի ալգորիթմին: Մեր թիմը իրականացնում է այն քաղաքականությունը, որն օգտակար է Հայաստանի համար»: ՔՊ-ական Արթուր Հովհաննիսյանը եւս ոգեւորված էր Նիկոլ Փաշինյանի հայտարարություններով՝ասելով, թե համաձայն է նրա հետ: Արդեն երեկ էլ Փաշինյանն ավելի տարօրինակ հայտարարությամբ հանդես եկավ. ««Մենք 30 տարի մեր սիրելի հայրենիքում ապրում ենք, մի տեղ, որի «կադաստրի վկայականը» չունենք: Ընդ որում՝ ՀՀ-ն իր բազմահազարամյա գոյության ընթացքում երբեք «կադաստրի վկայական» չի ունեցել: Եթե մեր ուզածը ստացվի, մենք պատմության մեջ առաջին անգամ կստանանք «կադաստրի վկայական»»: Նա ասաց՝ մի քանի պետություն կա, որ մտածում է, թե երբ ուզի, կարող է Հայաստանին ասել՝հավաքվեք, այստեղից դուրս եկեք, ու Հայաստանը չունի «կադաստրի թուղթ», որ ցույց տա այդ երկրներին: Ստացվում է՝ ոչ միայն Արցախն են հանձնում, այլ նաեւ Հայաստանի գոյությունն են կասկածի տակ դնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում կադրերի տեղափոխության հարց է առաջացել: ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցեցին, որ Նիկոլ Փաշինյանն առաջիկայում նպատակ ունի իշխող խմբակցության պատգամավորներից որոշներին տեղափոխել գործադիր՝նախարարի կամ փոխնախարարի պաշտոնում, կլինեն նաեւ մարդիկ, որոնք, առհասարակ, պաշտոնից կզրկվեն: Ե՞րբ է պլանավորել Փաշինյանն իրագործել այս պլանը: ՔՊ ներսում խոսակցություններ կան, որ նա պլանավորել է մինչեւ աշուն իրականացնել իր ծրագիրը, բայց, երկրում ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված, հստակություն չկա դեռ: Փաշինյանի համար առաջնային է հատկապես ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանի հարցը: Ինչպես հայտնի է, ԱԻ նախարարությունը հուլիսից գործելու է Ներքին գործերի նախարարության կազմում. Փամբուխչյանը շուտով առանց աշխատանք կմնա: Մեր տեղեկություններով՝ վերջինիս առաջարկվել է վարչապետի խորհրդականի պաշտոնը, ինչը Փամբուխչյանի սրտով չէ: Նա նախկինում իշխող խմբակցության պատգամավոր էր, հետո դարձավ նախարար, այսքանից հետո վարչապետի խորհրդականի պաշտոնն իր սրտով չէ. բարձր պաշտոն է ուզում: Հիմա Փաշինյանը փորձում է Փամբուխչյանին չնեղացնել ու մտածում է՝ուր տեղավորել նրան: Ամեն դեպքում, ՔՊ ներսում անորոշ վիճակ է, սպասում են, տեսնեն՝թե ինչպես կդասավորվի իրենց ճակատագիրը, ինչ է մտածել Փաշինյանն իրենց համար:

Հայաստանում տեղի են ունեցել միջոցառումներ, որոնց կազմակերպչական աշխատանքները կատարել է կառավարությունը: Հատկապես բավականին ակտիվ է եղել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ում էլ վստահված են եղել կազմակերպչական աշխատանքները: Ընդ որում՝ այդ միջոցառումների անցկացման համար բավականին մեծ գումարներ են տրամադրվել: Երեւանում ապրիլի 15-23-ն անցկացված ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնության անցկացման համար հայտարարված մրցույթին մասնակցել էին չորս ընկերություններ, եւ վերջնական հաղթող էր ճանաչվել «Բեգրաուն դիզայն» ՍՊԸ-ն, ում հետ կնքված պայմանագրից պարզ է դառնում, որ ընդհանուր ծառայության համար նախարարությունը փուլային եղանակով կվճարի 1 մլրդ 160 մլն դրամ: Արայիկ Հարությունյանը եղել է կառավարական հանձնաժողովի նախագահը: 2022 թվականի մայիսի 21-31-ը Երեւանում անցկացվել էր նաեւ բռնցքամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնություն: Այդ առաջնության կազմակերպման եւ անցկացման նպատակով «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 750 մլն 192 հազար դրամ՝ մեկ անձից գնման ընթացակարգով: Այստեղ եւս առաջնության անցկացման աշխատանքները համակարգողը եւ միջգերատեսչական հանձնաժողովի նախագահը եղել է Արայիկ Հարությունյանը: Միայն այս երկու միջոցառումով ամեն ինչ չի սահմանափակվում, եւ, առհասարակ, Հարությունյանն ակտիվ է այնտեղ, որտեղ գումար կա, որը կարելի է ծախսել միջոցառման անվան տակ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վարչապետի որդու միջադեպի գործով նախաքննական մարմինը գնացել է ՀՀ վերաքննիչ դատարան եւ առգրավել դատարանի տարածքի բոլոր տեսախցիկները: Հիշեցնենք, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու՝Աշոտ Փաշինյանի հաղորդման հիմքով՝Քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցել՝մարդուն առեւանգելու հոդվածով: Գործով կալանավորվել է 44-օրյա պատերազմի հերոս Ժորա Մարտիրոսյանի մայրը՝Գայանե Հակոբյանը: Վերջինս, ըստ լուրերի, քաղաքական իշխանության կողմից ճնշման է ենթարկվել եւ հրաժարվել է վարչապետի դեմ իր պայքարից, եւ դա է պատճառը, որ նա հրաժարվեց իր պաշտպաններից, իսկ «Որդիների կանչ» ՀԿ-Ն էլ դադարեցրեց նստացույցը Կառավարության դիմաց, որից հետո նրան ազատ կարձակեն: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Գայանե Հակոբյանի պաշտպան Հովսեփ Սարգսյանը հայտնեց, որ ճնշման մասին խոսք չի կարող լինել, այդ թվում՝ պայմանավորվածության, առաջիկայում իրենք՝ գործով ներգրավված նոր պաշտպանները, կանդրադառնան քրեական վարույթին:

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՕՐԻՆԱԿԱՆ

Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսում հաստատեց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականություն ճանաչելը 86.600 քմ/կմ սահմաններով ներառում է նաեւ Արցախը, բացի սա, Հայաստանը պատրաստվում է Ադրբեջանին զիջել նաեւ անկլավները:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է ՔՊ խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հետ: Վերջինս նշեց, որ իրենք շարժվում են խաղաղության օրակարգով եւ փորձում են 29.800 ք/կմ-ը դարձնել անվտանգ միջավայր:

-Պարոն Հակոբյան, ի՞նչպես կմեկնաբանեք վարչապետի հայտարարությունները: Դուք նախապես տեղյա՞կ էիք այդ ամենից, թե՞ Փաշինյանի հայտարարություններն անսպասելի էին նաեւ Ձեզ համար:

-Ուզում եմ նշել, որ այսօր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուղղակիորեն շարժվում են խաղաղության պայմանագրի ստորագրման ուղղությամբ: Մենք անում եւ անելու ենք ամեն ինչ, որպեսզի խաղաղության օրակարգը Հայաստանի Հանրապետությունում դառնա օրինական: Նաեւ ուզում եմ նշել, որ մենք ծայրահեղ պատասխանատվությամբ ենք վերաբերվում բոլոր անվտանգային պրոցեսներին: Շատ եմ կարեւորում այն հանգամանքը, որ մենք ծանր եւ երկարատեւ բանակցությունների արդյունքում ունենանք հնարավորություն համընդանուր փոխըմբռնման, ինչպես նաեւ շատ մեծ դերակատարում պետք է ունենան բանակցող բոլոր կողմերը: Կարծում եմ, որ Հայաստանի պետական շահը պահանջում է, որպեսզի Արցախի ժողովրդի իրավունքները եւ մեր անվտանգությունը բանակցող կողմերը լավագույնս ներկայացնեն այս գործընթացում, որը հիմա ընթանում է:

-Ասում եք, որ գնում եք խաղաղության ճանապարհով, բայց Ադրբեջանն իր քայլերով ցույց է տալիս, որ ամենեւին տրամադրված չէ խաղաղության, բանակցությունների ժամանակ ձեռք բերված որեւէ պարտավորություն չի պահում: Ի՞նչ երաշխիք կա, որ եթե ճանաչենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, հերթական զիջմանը գնանք, Ադրբեջանն էլ կկատարի իր պարտավորությունները:

-Միակողմանի որեւէ գործընթաց չի լինելու, որեւէ երկրի տարածքային ամբողջականության ճանաչում նշանակում է փոխադարձ տարածքային ամբողջականության ճանաչում: Այժմ հենց բանակցությունների սեղանին դրված է այն հանգամանքը, որ մենք փորձում ենք Հայաստանի Հանրապետության 29 800 ք / կմ-ը դարձնել մեր հայրենակիցների համար բացառապես անվտանգ միջավայր:

-Պարոն Հակոբյան, ՔՊ-ն երեքշաբթի օրը վարչության նիստ էր արել, որին մասնակցում էր նաեւ Նիկոլ Փաշինյանը: Ի՞նչ հարցեր եք քննարկել, արդյոք Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունները քննարկե՞լ եք վարչության նիստին:

-Վարչության նիստից հետո մենք հանդես ենք գալիս հաղորդագրությամբ, որտեղ նշված է, որ մենք քննարկել ենք ներքին եւ արտաքին բազմաթիվ խնդիրներ: Կարծում եմ՝ հասկանալի է, որ այդ արտաքին խնդիրների քննարկման մեջ ներառում է նաեւ անվտանգային հարցեր:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՆԿԼԱՎՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՎԱԾ ՉԷ

Անկլավների թեման քաղաքական մակարդակում գոյություն է ունեցել միշտ եւ շաս վաղուց: Օրինակ՝ 1999թ. տարածքների փոխանակման փաստաթղթի մեջ 4-րդ հոդվածը նվիրված է Հայաստանի եւ Ադրբեջանի անկլավներին:



Ազգային ժողովի ամբիոնից Նիկոլ Փաշինյանը, մասնավորապես, նշեց. «Հարցը քաղաքական եւ իրավական կողմ ունի: Քաղաքական մակարդակում Մյունխենում եւ Բրյուսելում եղել է հետեւյալ խոսակցությունը. մենք փոխադարձաբար ճանաչո՞ւմ ենք անկլավների գոյությունը, այսինքն՝որ կա Արծվաշեն, որը պատկանել է ՀՀ-ին, եւ անկլավներ, որոնք ՀՀ-ի տարածքում են եւ պատկանել են Ադրբեջանին: Քաղաքական մակարդակում դա մենք ճանաչում ենք: Ես ասել եմ, որ իրավական մակարդակում, առնվազն դրանցից մի քանիսի հետ կապված, մենք ունենք լրացուցիչ հարցեր»:

Նրա խոսքով՝ այս, ինչպես նաեւ ՀՀ եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման արձանագրումներից հետո հարց է առաջանում՝ ինչպես է լուծվելու անկլավների հարցը. «Լուծելու երկու տարբերակ կա: Առաջինը՝ որը սահմանից այս կողմ է, մնում է սահմանից այն կողմ գտնվող երկրի տարածքում, որը սահմանից այս կողմ է, մնում է սահմանից այս կողմ երկրի տարածքում: Օրինակ՝ հարց է նաեւ այն, որ, պատկերացնո՞ւմ եք, մենք գնանք, ասենք՝ Արծվաշենը չենք ուզում, էն մյուսները թող մնան մեր տարածքում, բայց այստեղ էլ իրավական հարցեր ու նրբություններ կան, որովհետեւ ՀՀ ինքնիշխան տարածքից ո՞վ կարող է հրաժարվել: Էդտեղ որեւէ բան որոշված չէ. կան քննարկումներ, եւ, իմ պատկերացմամբ, սա այն կետն է, որտեղ ճկունության մեծ տեղ կա»:

Փաշինյանը եւս մեկ անգամ շեշտեց՝ որեւէ բան որոշված չէ, կան մտքեր, գաղափարներ, որոնցից որեւէ մեկը մերժված չէ. եթե Ադրբեջանի հետ կլինի հստակ պայմանավորվածություն, ինքը կգա ու կասի՝ հարցի լուծման շուրջ հստակ պայմանավորվածություն կա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԱՆՈՍՅԱՆԻ ՄԵԿԱՆՁՆՅԱ ԳՆՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը բավականին ակտիվ է գնումներ կատարելիս: Գնել Սանոսյանի ղեկավարած կառույցը նաեւ հետ չի մնում իր մյուս գործընկերներից՝ մեկ անձից կատարվող՝ նախկինում խիստ մերժելի ձեւաչափով գնումներից: Օրինակ՝ նախարարությունը 17 մլն 209 հազար դրամով պայմանագիր է ստորագրած եղել «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ՝ մեկ անձից գնման ընթացակարգով, եւ իրականացվել են հեղինակային հսկողության ծառայություններ: Մեկ անգամ էլ այս նույն ընկերության հետ պայմանագիր է ստորագրված եղել 3 մլն 998 հազար դրամով: Նույն ծառայությունն իրականացնելու համար կրկին մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր է ստորագրված եղել «Արցախճանինստիտուտ» ՓԲԸ-ի հետ՝ 4 մլն 290 հազար դրամ արժողությամբ: Գնել Սանոսյանի ղեկավարած կառույցն առհասարակ այս տարի մեկ անձից գնումների հարցում ակտիվ է եղել: Օրինակ՝ կահույքի վերանորոգման համար այս կառույցը ծախսել է 250 հազար դրամ, համակարգչային ծառայությունների համար՝2 մլն 835 հազար դրամ, կապի ծառայությունների համար՝ 60 հազար դրամ: Ի տարբերություն մյուս նախարարությունների՝ այստեղ ավելի բարվոք վիճակ է կադրային առումով, եւ, պաշտոնական կայքի համաձայն, թափուր է միայն Ընդերքի վարչության պետի պաշտոնը:

ԱՄՆ-Ն ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ԿԳՆԱ

ԱՄՆ Պետդեպը մտադրություն ունի մինչեւ վերջ տանել Հայաստան-Ադրբեջան բանակցություններում մինչ այժմ արձանագրված առաջընթացը:

Եվրոպայի եւ Եվրազիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Դերեկ Հոգանը, ելույթ ունենալով Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հարցերով հանձնաժողովում, նախանշել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններում հետագա անելիքները: Նրա խոսքերով՝ մայիսի սկզբին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենն ընդունել էր Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներին, որպեսզի քննարկեն մի շարք վիճելի հարցեր, որոնց թվում են եղել նաեւ Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի անվտանգության հարցը:

«Հանդիպման ժամանակ ինտենսիվ դիվանագիտական փոխհարաբերություններ են եղել երկու կողմերի միջեւ: Մենք մի շարք առաջարկներ ենք առաջ քաշել, որոնք թույլ են տալիս վերացնել տարաձայնությունները: Նրանք դա վերցրել են դիտարկման»,- ասել է Հոգանը:

Նա նաեւ հավելել է, որ Քիշինեւում հունիսի 1-ին սպասվող հանդիպման ժամանակ կենտրոնանալու են այն հանգամանքի վրա, թե ինչ է պետք անել, որ գործն ավարտին հասցնի:

«Մեզ երկար ճանապարհ է սպասվում»,- ասել է դիվանագետը:

ՓԱՇԻՆՅԱՆԸ «ԼՈՒԾԱՐԵ՞Լ Է» ԼՂԻՄ-Ը

Եթե Նիկոլ Փաշինյանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, նշանակում է երբեմնի հզոր, անկախ եւ անվտանգ Արցախի Հանրապետությունը մեխանիկորեն վերածվում է տերիտորիայի, ինչպիսին է, օրինակ, Բաքվի որեւէ թաղամասը կամ Կուբաթլուն, քանի որ ԼՂԻՄ Ադրբեջանում պաշտոնապես գոյություն չունի (26 նոյեմբեր 1991թ Ադրբեջանի գերագույն խորհրդի որոշում): Ավելին՝ Արցախի տեղանունները մեխանիկորեն դառնում են ադրբեջանական:

Մայր Հայաստանը նաեւ պետք է անհապաղ խզի դիվանագիտական հարաբերությունները ԼՂՀ հետ՝ օրենքից դուրս հայտարարելով ՀՀ-ում Արցախի ներկայացուցչությունը:

Իր հերթին Ադրբեջանը, ճանաչելով հանդերձ ՀՀ-ի 29.8 հազար քառակուսի կիլոմետրը, կանցնի տնտեսական պահանջներին եւ ոչ մի միջազգային, առավել եւս՝ Լոնդոնի արբիտրաժային դատարան չի մերժի Ադրբեջանի հայցերը, քանզի ՀՀ-ն ինքն է իրեն ճանաչում ագրեսոր՝ Արցախը ճանաչելով Ադրբեջանի մաս:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՊԱՀԵԼԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը ուղերձ է հղել՝ անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ մայիսի 22-ի ասուլիսի ընթացքում հնչեցրած մտքերին եւ Արցախում ստեղծված ներքաղաքական իրավիճակին: Ներկայացնենք ուղերձի մի քանի գլխավոր կետերը.

«Արդեն 163 օր շարունակ Արցախը ապրում է խորացող ադրբեջանական հանցավոր շրջափակման պայմաններում: Մեր շուրջը տեղի են ունենում բովանդակային առումով անընդհատ փոփոխվող իրադարձություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց ազդեցությունն են թողնում տարածաշրջանի եւ, մասնավորապես, Արցախի Հանրապետության եւ մեր ժողովրդի վրա: Չնայած ստեղծված իրավիճակին ու օրեցօր ահագնացող մարտահրավերներին՝ Արցախի ժողովուրդը մաքառում է իր սեփական հողում իր հավաքական իրավունքների ու ազատությունների համար՝ շարունակելով նախնիների սուրբ գործը…

Արտաքին քաղաքական եւ անվտանգային ուղղություններում այժմ առկա են մի շարք գործոններ, որոնք ուղղակիորեն ազդում են Արցախի ժողովրդի ներկայի ու ապագայի վրա: Կուզեի դրանցից առանձնացնել հետեւյալները՝

• Արցախի ավելի քան հնգամյա շրջափակումը՝ փուլ առ փուլ ահագնացող հումանիտար ու քաղաքական մարտահրավերներով եւ անվտանգային սպառնալիքներով,

• Արցախի կենսական նշանակության ենթակառուցվածքների շարունակական խափանման հետեւանքով հումանիտար վիճակի վատթարացումը եւ ռիսկերի մեծացումը,

• Ադրբեջանի կողմից Արցախի հանդեպ ռազմական նոր ագրեսիայի ռիսկի շարունակական աճը եւ էթնիկ զտման իրականացման անթաքույց նկրտումները,

• 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված՝ Արցախի ժողովրդի անվտանգության ռուսական երաշխիքների լրջագույն ճեղքումը,

• ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված՝ տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածության եւ Ադրբեջանի ագրեսիվության աճը,

• միջազգային իրավակարգի շարունակական թուլացումը եւ միջազգային հանրության ձախողումը Արցախի ժողովրդի անվտանգության ու հիմնարար իրավունքների ապահովման, ինչպես նաեւ միջազգային դատարանների որոշումների կատարման հարցում,

• Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի դիրքերի շարունակական թուլացումը եւ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելուն ուղղված քայլերը:

Հաշվի առնելով վերոնշյալ եւ այլ էական գործոնները՝ դիմում եմ՝

• Արցախի իմ հայրենակիցներին՝ չվիատվել եւ պատրաստ լինել պայքարի շարունակությանը՝ մի կողմ թողնելով ներքին տարաձայնությունները եւ մեկ բռունցքի պես վճռական կերպով ծառայել նույն նպատակին՝ Արցախի ամրացմանն ու զարգացմանը: Ուրախ եմ, որ այդ հարցում Արցախում առկա է լրիվ միասնական մոտեցում: Այդ առումով, ողջունելով Արցախի Հանրապետության Ազգային ժողովի երեկվա հայտարարությունը՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված մտքերի վերաբերյալ, ընդգծում եմ, որ մեզ համար անընդունելի է Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ դրա իրացման փաստն անտեսող ցանկացած հայտարարություն եւ փաստաթուղթ: Արցախը չի եղել եւ չի լինելու Ադրբեջանի կազմում, քանի որ դա է մեր ժողովրդի կամքը, որն ունի բավարար վճռականություն՝ իր իրավունքների ու շահերի համար պայքարելու: Վստահ եմ, որ պայքարողը միայնակ չի մնում, եւ ոչ միայն համայն հայությունն է շարունակելու սատարել մեր պայքարին, այլեւ միջազգային դաշտում նույնպես կգտնվեն արժեքահեն աջակիցներ: Այո՛, իրավիճակը ծանր է, բայց ոչ անելանելի, եւ Արցախի իշխանությունները կատարում եւ կատարելու են հնարավոր գործնական քայլերը արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու ուղղությամբ:

• Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ձեռնպահ մնալ Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու որեւէ գործողությունից ու հայտարարությունից՝ հավատարիմ մնալով ներպետական ու միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններին եւ համազգային իղձերին ու շահերին: Գիտակցելով հետպատերազմյան ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության խոցելի վիճակը՝ մենք ըմբռնումով ենք մոտեցել տարբեր զարգացումների եւ գիտակցաբար կրել ու կրում ենք բազմաթիվ զրկանքներ՝ չեզոքացնելու համար մեզ ճնշելու միջոցով Հայաստանի Հանրապետությանը զիջումներ պարտադրելու բոլոր փորձերը: Սակայն կան հստակ սկզբունքներ ու կարմիր գծեր, որոնց խախտումներն անընդունելի եւ անթույլատրելի ենք համարում, եւ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելն այդ կարմիր գծերից է, որը, վստահ ենք, համայն հայության գերակշիռ մասի համար մնում է այդպիսին: Արցախին առնչվող գործողություններում ու դիրքորոշումներում Հայաստանի Հանրապետության համար գլխավոր ուղենիշը պետք է լինի Արցախի ժողովրդի կամարտահայտությունը, որն աներկբա կերպով դրսեւորվել է անկախության եւ սահմանադրական հանրաքվեներով՝ Հայաստանի Հանրապետության եւ ողջ հայ ժողովրդի անվերապահ սատարմամբ: Իսկ Հայաստան-Ադրբեջան միջպետական հարաբերությունների կարգավորումը չի կարող տեղի ունենալ ադրբեջանաղարաբաղյան հակամարտությունից լրիվ անջատ տրամաբանությամբ եւ Արցախի ժողովրդի կենսական իրավունքների ու շահերի հաշվին, որոնք, ի դեպ, կազմում են համայն հայ ազգի կենսական իրավունքների ու շահերի անբաժանելի ու կարեւոր մասը»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՐԱՆԴԻՊԵՆ ԱՅՍՕՐ

Այսօր Մոսկվայում տեղի կունենա Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներ Վլադիմիր Պուտինի, Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը. այդ մասին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Հինգշաբթի այստեղ կլինեն եւ՛ նախագահ Ալիեւը, եւ՛ վարչապետ Փաշինյանը: Մենք ակնկալում ենք, որ շփումներ կլինեն մեր նախագահի հետ, այս շփումների նախապատրաստական աշխատանքներն ընթանում են: Թե որքանով արդյունավետ կլինի, ժամանակը ցույց կտա»,- ասել է Կրեմլի ներկայացուցիչը:

Հավելենք, որ ավելի վաղ Մոսկվայում տեղի են ունեցել եռակողմ բանակցություններ՝ Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների մասնակցությամբ:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԱՄՆ-ն դիտարկում է Հայաստանում փոքր մոդուլային միջուկային ռեակտորների կառուցման հնարավորությունը: Խոսքը Հայաստանի եւ Եվրասիայի այլ երկրների մասին է: Այս մասին հայտարարել է ԱՄՆ կառավարության Եվրոպայի եւ Եվրասիայի աջակցության ծրագրի համակարգող Մարիա Լոնգին. փոխանցում է ՏԱՍՍ-ը: «Դրանք կարող են հանգեցնել ավելի մեծ էներգետիկ անկախության ինչպես Ռուսաստանից, այնպես էլ Չինաստանից»,- ասել է նա:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը հունիսի 1-3 կգործուղվեն Փարիզ: Պատգամավորը Փարիզում կմասնակցի Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպայի տարածաշրջանի պատվիրակությունների ղեկավարների համաժողովի աշխատանքներին:

Պատգամավորի գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն ՀՀ պետբյուջեի հաշվին:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

ԱՊՕՐԻՆԻ ԽԱՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում հայտնաբերվել են ապօրինի խաղատնային գործունեության մի շարք դեպքեր. խաղախցիները կազմակերպել եւ իրականացրել են «Պոկեր» տեսակի կենդանի շահումով խաղեր:

Այդ մասին հայտնում են դատախազությունից:

Դատախազը 13 անձի վերաբերյալ հաստատված մեղադրական եզրակացությունները 2023 թվականի մարտի 2-ին, ապրիլի 19-ին, մայիսի 17-ին եւ 18-ին վարույթի նյութերի հետ հանձնել է իրավասու դատարան:

Մասնավորապես՝ Քննչական կոմիտեում իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Ս.Պ.-ն եւ Դ.Շ.-ն 2020 թվականի դեկտեմբերից մինչեւ 2021 թվականի փետրվարը կազմակերպել եւ իրականացրել են «Պոկեր» տեսակի կենդանի շահումով խաղեր: Այդ նպատակով վարձակալել են առանձնատուն, պայմանավորվածություններ են ձեռք բերել պետական գրանցում ունեցող ու լիզենզավորված խաղատների խաղավարներ Ա.Գ.-ի ու Ա.Բ.-ի հետ եւ մասնակիցներին վճառել 1000, 5000 եւ 25 հազար դրամին համարժեք խաղաքարեր՝ խաղադրույք կատարելու նպատակով: Յուրաքանչյուր շահած գումարից Ա.Գ.-ի ու Ա.Բ.-ի կողմից, հօգուտ Ս.Պ.-ի եւ Դ.Շ.-ի, խաղաքարերի տեսքով գանձվել է 5 տոկոս գումար, որը 1 ժամում միջինում կազմել է 30-40 հազար դրամ (խաղերը տեւել են օրական նվազագույնը 5-6 ժամ):

Վերոնշյալ հանցավոր գործողությունների հետեւանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 5 մլրդ 500 մլն դրամի գույքային վնաս:

Դատախազի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ՝ Ս.Պ.-ի եւ Դ.Շ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը, որը պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս) եւ Ա.Գ.-ի ու Ա.Բ.-ի նկատմամբ՝ 46-281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն կազմակերպելը եւ օժանդակելը):

Մեկ այլ քրեական վարույթով պարզվել է, որ որ Հ.Մ.-ն 2021 թվականի ընթացքում Սայաթ-Նովա պողոտայում վարձակալել է ակումբի փոքր եւ մեծ առանձնասենյակներ, որտեղ առկա են եղել թղթախաղերի, այդ թվում նաեւ՝ «Պոկեր» տեսակի կենդանի խաղի անցկացման համար անհրաժեշտ խաղասեղաններ:

Նույն նպատակով Հ.Մ.-ն Կոտայքի մարզի Քասախ համայնքում Պ.Պ.-ից 4000 դրամ ժամավճարով պարբերաբար վարձակալել է առանձնատուն, որտեղ Պ.Պ.-ն տեղադրել է թղթախաղերի, այդ թվում՝ նաեւ «Պոկեր» տեսակի կենդանի շահումով խաղի անցկացման համար անհրաժեշտ խաղասեղան, խաղաքարտեր, խաղաքարեր, հավաքագրել է մասնակիցներ եւ իրականացրել շահումով խաղեր: Նույն հասցեի առանձնատանը շահումով խաղեր է կազմակերպել եւ իրականացրել նաեւ Հ.Ս.-ն: Պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 11 մլրդ դրամի գույքային վնաս:

Դատախազի 2023 թվականի մարտի 14-ի որոշմամբ՝ Հ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Պ.Պ.-ի նկատմամբ՝ 46-281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, խաղավարներ Ա.Դ.-ի եւ Ա.Պ.-ի նկատմամբ՝ 46-281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հ.Ս.-ի նկատմամբ՝ 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Մեկ այլ վարույթով հիմնավորվել է, որ Հ.Կ.-ն 2021 թվականի ընթացքում Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գտնվող բնակելի շենքի նկուղային հարկի հասարակական նշանակության տարածքում, նույն քաղաքում գործող ռեստորանի տարածքում գտնվող սենյակում, ինչպես նաեւ համակարգչային խաղերի եւ ժամանցային ակումբի սրահում, առանց պետական գրանցման եւ լիցենզիայի, պարբերաբար կազմակերպել եւ վարել է «Պոկեր» տեսակի շահումով խաղ եւ ստացել շահույթ: Պպետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 16 մլրդ 500 մլն դրամի գույքային վնաս:

Նույն վարույթի շրջանակում պարզվել է նաեւ, որ Ա.Կ.-ն օժանդակել է Հ.Կ.-ի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն կազմակերպելուն եւ իրականացնելուն: Պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 5 մլրդ 500 մլն դրամի գույքային վնաս:

Դատախազի՝ 2023 թվականի մայիսի 10-ի որոշումներով՝ Հ.Կ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին), Ա.Կ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականի ընդունված Քրեական օրենսգրքի 38-188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքի 46-281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ օժանդակություն):

Քննչական կոմիտեում իրականացված մեկ այլ վարույթով պարզվել է, որ Գ.Թ.-ն շահույթ ստանալու նպատակով, խաղավար Մ.Մ.-ի օժանդակությամբ, առանց պետական գրանցման եւ լիցենզիայի, կազմակերպել է լիցենզավորման ենթակա՝ «Պոկեր» տեսակի կենդանի շահումով խաղ: Գ.Թ.-ն 2021 թվականի մարտից մինչեւ 2021 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում «Պոկեր» տեսակի կենդանի խաղ անցկացնելու համար նախատեսված անհրաժեշտ գույքով կահավորված իր բնակարանում եւ Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայում գործող սրճարանի կողմից ժամավճարով վարձակալության տրամադրված առանձնասենյակում կազմակերպել եւ իրականացրել է «Պոկեր» տեսակի կենդանի շահումով խաղ: Պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 5 մլրդ 500 մլն դրամի գույքային վնաս:

Դատախազի՝ 2023 թվականի ապրիլի 27-ի որոշումներով՝ Գ.Թ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Մ.Մ.-ի նկատմամբ՝ 46-281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ԼԱԲԱՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մայիսի 18-ին Արտաշատի թիվ 4 մուր-մանկապարտեզից «Սենդային թունավորում՝ չճշտված էթիոլոգիայով» ախտորոշմամբ հիվանդանոց տեղափոխված բոլոր երեխաները մայիսի 22-ին դուրս են գրվել մանկական բաժանմունքից:

«Մանկապարտեզի 18.05.2023թ. ճաշացանկում ներառված սննդամթերքի (խաշած ձու, թանապուր, ոլոռով սուպ, մակարոնով փլավ) նմուշները հանձնվել էին լաբորատոր հետազոտության: Նմուշներ էին վերցվել նաեւ խոհանոցի եւ խմբասենյակների շփվող մակերեսներից, ինչպես նաեւ կենսանմուշներ մանկապարտեզի սաներից եւ սպասարկող անձնակազմից: Սննդամթերքի փորձաքննության արդյունքներով՝ ներկայացված թանապուրը՝ ՄԱՖԱՆՄՔ (մեզոֆիլ աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ) եւ ոսկեգույն ստաֆիլակոկ (S.aureus), ոլոռով սուպը՝ ՄԱՖԱՆՄՔ եւ ԱՑԽՄ (աղիքային ցուպիկի խմբի մանրէներ), իսկ մակարոնով փլավը ԱՑԽՄ ցուցանիշներով չեն համապատասխանել Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

Խաշած ձվում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Շեղումներ չեն հայտնաբերվել նաեւ վերցված խմելու ջրի նմուշում: Շեղում է արձանագրվել խոհանոցից եւ խմբասենյակներից վերցված լվացուկներում, իսկ մանկապարտեզի սաների եւ սպասարկող անձնակազմի կլինիկական նմուշների լաբորատոր հետազոտության արդյունքում հայտնաբերվել են նորովիրուսի հարուցիչներ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մանկապարտեզում բռնկման հավանական պատճառը երկրորդային աղտոտվածությունն է»,- ասված է ՍԱՏՄ-ի հաղորդագրության մեջ:

Այս պահին ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի կենտրոնի տեսուչները Արտաշատի թիվ 4 մուր-մանկապարտեզում իրականացնում են պետական վերահսկողություն՝ ստուգում:

ԼՈՒՐԵՐ

«Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԻՆՁ ՃՆՇԵԼ»

Երեկ «Որդիների Կանչ» ՀԿ-ն որոշում կայացրեց կասեցնել պայքարի այս ձեւը եւ դադարեցնել նստացույցը Կառավարության դիմաց:

Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցեց զոհված հերոսի հայր Գարիկ Գալեյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ պայքարը շարունակելու են մինչեւ վերջ:

«Ո՞նց եք պատկերացնում, ո՞վ կարող է ինձ ճնշել կամ վախեցնել: Ես մինչեւ վերջ պայքարելու եմ: Մեր ազգն անցել է բոլոր սահմանները, բոլոր արժեքները. եթե հերոսի ծնողին հայհոյում են, մեր ազգը լռում է, ինչի՞ մասին է խոսքը»,-նշեց նա եւ հավելեց, որ պայքարի այլ տարբերակի մասին կխոսի մի քանի օրից:

Հիշեցնենք, որ երեկ փաստաբան Ռուբեն Մելիքյանը ֆեյսբուքյան իր էջում գրել էր. «Հարգելի՛ հայրենակիցներ,

վերջին օրերի իրադարձություններն ամբողջությամբ ձեր աչքի առջեւ էին, ուստի անսպասելի չի լինի մեր այն համոզմունքը, որ տիկին Գայանեի արդյունավետ պաշտպանության իրավական գործիքակազմն այլեւս սպառված է:

Նշվածի հիման վրա՝ հայտնում ենք, որ խորհրդակցելով թե՛ մեր վստահորդի եւ թե՛ նրա ընտանիքի հետ, որոշում ենք կայացրել դադարեցնելու մեր մասնակցությունը քրեական վարույթի հետագա ընթացքին:

Տիկին Գայանեի պաշտպանությունը շարունակող մեր գործընկերներին մաղթում ենք հաջողություն:

Ազատություն տիկին Գայանեին:

Փաստաբաններ՝

Վահան Հովհաննիսյան

Ռուբեն Մելիքյան

Վահան Գեւորգյան»:

Նշենք, որ ՀՀ վարչապետի որդի Աշոտ Փաշինյանին առեւանգելու գործով դատարանը որոշում կայացրեց 1 ամսով կալանավորել զոհված զինծառայողի մայր Գայանե Հակոբյանին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ՓԱԹԵԹ

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում տեղեկություններ էին ստացվել, որ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի մի բնակիչ զբաղվում է ապօրինի թմրաշրջանառությամբ:

Ոստիկանությունից հայտնում են, որ քրեական հետախույզները ստուգման նպատակով այցելել են նշված հասցե: Տան զննությամբ հայտնաբերվել է շուրջ 60 գրամ Մարիխուանայի նմանվող զանգվածով փաթեթ: 43-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ՏԱՎՈՒՇԻ ԱՆԿԼԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիկոլ Փաշինյանն իր վերջին մամուլի ասուլիսում հայտարարեց, որ ինքը պատրաստ է ընդունել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ 86.600 քառակուսի կիլոմետր տարածքով, որի մեջ մտնում են անկլավները՝ Տավուշի գյուղերը եւ Տիգրանաշենը: Այդ հայտարարության վերաբերյալ Նոքյեմբերյան խոշոր համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը ասել է, որ Նոյեմբերյան համայնքում անկլավներ չկան, նոյեմբերյանցիներն ապրում են հայկական հողում: Տավուշի մարզում նախկինում ադրբեջանաբնակ 7 գյուղերի տարածքներ կան, որոնք արդեն 30 տարի ավերակ վիճակում են: Դրանք բոլորը ադրբեջանաբնակ փոքր գյուղեր են եղել՝ բացառությամբ Ներքին Ոսկեպարի (Աշաղի Ասքիպարա), որը միջին չափի գյուղ էր: Այդ 7 գյուղերն են Բաղանիս-Այրում, Վերին Ոսկեպար (Յուխարի Ասքիպարա), Ներքին Ոսկեպար (Աշաղի Ասքիպարա), Խերմիլի, Ղզլհաջիլի, Բարխուդարլու, Սոֆուլու: Այդ գյուղերից խորհրդային ժամանակ միայն 2-ն են եղել անկլավ՝Բաղանիս-Այրումը եւ Վերին Ոսկեպարը (Յուխարի Ասքիպարա), որոնք կղզիների նման լինելով Խորհրդային Հայաստանի տարածքում՝ վարչականորեն պատկանել են Ադրբեջանի Ղազախի շրջանին, մնացած գյուղերը թիկունքով կպած են եղել Ադրբեջանին, 1990-ականների սկզբին տեղի ունեցած մարտերի արդյունքում այդ գյուղերի տարածքները հայտնվել են Հայաստանի զինուժի վերահսկողության տակ:

Այդ գյուղերի տարածքները հանձնելու դեպքում վտանգվելու է Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի Կիրանց- Ոսկեպար- Բաղանիս հատվածով երթեւեկը, քանզի Խերմիլին, Բաղանիս-Այրումը, Ներքին Ոսկեպարը գտնվում են հենց այդ ճանապարհի եզրին: Սոֆուլույի եւ Բարխուդարլույի տարածքների հանձնումով վտանգվելու է Իջեւան-Վազաշեն-Պառավաքար-Բերդ հանրապետական նշանակության ավտոճանապարհով երթեւեկը:

Վերին Ոսկեպարի տարածքի հանձնումով ադրբեջանական զինուժը հայտնվելու է Լոռու մարզի թիկունքում. Լոռու մարզը դառնալու է սահմանամերձ, խոցելի: Տարածքները հանձնելու դեպքում Ոսկեպարը որպես գյուղ չի կարողանալու գոյատեւել, քանզի բոլոր արոտավայրերը հանձնվելու են Ադրբեջանին, ոսկեպարցիներն էլ միայն անասնապահությամբ են զբաղվում: Այդ տարածքները Ադրբեջանին հանձնելու դեպքում վտանգվելու է նաեւ Նոյեմբերյանի տարածաշրջանի կապը Տավուշի մարզկենտրոն Իջեւանի հետ: Նիկոլ Փաշինյանը, փոխանակ հայտարարի, որ Տավուշի մարզի սահմանամերձ մոտ 10 հազար հեկտար հողատարածքներ արդեն 30 տարի գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ, խոսում է անկլավները Ադրբեջանին պատկանելու մասին: Խորհրդային ժամանակ Կոմունիստական կուսակցության շրջկոմի քարտուղարները, խորհրդային տնտեսությունների տնօրենները կաշառքով ադրբեջանցիներին հանձնել են Հայաստանի սահմանամերձ հողերը, անասնապահ, քոչվոր ադրբեջանցիները ժամանակի ընթացքում սեպի պես խրվել են Հայաստանի տարածքում, փոքր գյուղեր հիմնել, տներ կառուցել, այդպես են Հայաստանի հողում հիմնվել ադրբեջանական անկլավները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

Ո՞Վ Է ՔՊ-ԱԿԱՆ ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆԸ

Հայաստանի ազգային ժողովի 8-րդ գումարման ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանը հաճախ է հայտնվում լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Թերեւս դա պայմանավորված է նաեւ նրանով, որ վերջինս, լինելով պատմության մասնագետ եւ տարիներ շարունակ դասավանդելով Երեւանի տարբեր դպրոցներում, իր խոսքում հաճախ է հակահայկական հայտարարություններ անում:

Վերջերս, Ասլանյանը լրագրողների հետ զրույցում նշել է, որ ճիշտ է համարում Հայաստանի՝ Ադրբեջանի անկախությունը ճանաչելը, իսկ լրագրողի այն դիտարկմանը, թե այդ տարածքի մեջ է նաեւ Արցախը, Ասլանյանը պատասխանել է.

«Մենք կամաց-կամաց գնալու ենք Կոսովոյի նախադեպով: Սերբիայի տարածքային ամբողջականությունն էլ ճանաչվեց, բայց, ի վերջո, Կոսովոն ճանաչվեց որպես անկախ: Սերբիային ասացին, որ ճանաչում ենք, բայց կա ժողովրդի մի մաս, որ ինքնորոշվելու իրավունք ունի: Միջազգային հանրության պահանջն է՝ մինչեւ չճանաչեք միմյանց տարածքային ամբողջականությունը, ուրիշ հարց չի կարող մեջտեղ գալ: Բնական է, մենք ճանաչում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բայց դրանից անմիջապես հետո միջազգային հանրությունը գիտի եւ ինքն էլ հասկանում է, որ պետք է նաեւ այդ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը դրվի»:

Իսկ ավելի վաղ Ասլանյանը, լրագրողների հետ զրույցում խոսելով այն մասին, թե ինչու են Արցախի դրոշը խորհրդարանից հանում, պատասխանել է. «Կներեք, էդ խորհրդանիշը բերեք գլխիս տնկե՛ք: Խորհրդանիշը խորհրդանիշների տեղում են տնկում, ոչ թե ամեն տեղ, որտեղ հասնում է»:

Հակոբ Ասլանյանի կողմից երբեմնի ամենահայտնի «պատմական թեզիսներից» է նաեւ 2022 թվականի ապրիլի 15-ին հարցազրույցի ընթացքում արված հայտարարությունը. «Տիգրան Մեծը դրեց ծովից ծով Հայաստանի կործանման սկիզբը»: Նրա հնչեցրած այս արտահայտությանը բազմիցս անդրադարձել են մի շարք պատմաբաններ, լրագրողներ եւ այլ մասնագետներ:

Ուսումնասիրելով Հակոբ Ասլանյանի կենսագրությունը՝ հարց է առաջանում՝ ամբողջ կյանքում դպրոցներում պատմություն դասավանդած եւ սերունդներ կրթած անձնավորությունը ինչպես է նման կերպով արտահայտվում Արցախի եւ, առհասարակ, Հայաստանի մասին:

Ստորեւ ներկայացնում ենք Հակոբ Ասլանյանի աշխատանքային կենսագրությունը.

1971-1972 թվականներին որպես բանվոր աշխատել է «Հայգլավէներգո» կենտրոնական էլեկտրացանցում:

1972-1974 թվականներին եւ 1977-1978 թվականներին եղել է Երեւանի Մյասնիկյանի շրջանի կանաչապատման գրասենյակի փականագործ բանվոր: Որպես ապրանքագետ, ապա ճարտարագետ 1978-1982 թվականներին աշխատել է «Սոյուզգինտերգազստրոյ» համամիութենական միավորումում:

1987-1994 թվականներին Երեւանի թիվ 149 դպրոցում եղել է ուսուցիչ:

1994-2002 թվականներին մանկավարժի աշխատանքը շարունակել է Երեւանի Շիրակացու անվան ճեմարանում, եղել է պատմության ամբիոնի վարիչ, իսկ 2000-2003 թվականներին՝ Երեւանի «Ալգորիթմ» վարժարանի ուսուցիչ:

2003-2010 թվականներին որպես ուսուցիչ աշխատել է Երեւանի թիվ 164 դպրոցում, իսկ 2010-2015 թվականներին՝ Երեւանի թիվ 127 ավագ դպրոցում:

2011 թվականի փետրվարից հուլիս ընկած հատվածում եղել է Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետի տեղակալ:

2015-2018 թվականներին եղել է «Գլոբալ բրիջ» կրթահամալիր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ուսուցիչ:

2018-2019 թվականներին աշխատել է ՀՀ սփյուռքի նախարարությունում, եղել է «Հայրենիք-սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն: 2020 թվականի հունիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում աշխատել է Շրջակա միջավայրի նախարարությունում՝ որպես «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդական:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

ԱՅՈՒՀԵՏ՝ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Միասնական սոցիալական ծառայությունից տեղեկացնում են, որ 2023 թվականի հուլիսի 1-ից քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում (ցանկն՝ այստեղ) ընտանեկան, սոցիալական նպաստը եւ հրատապ օգնությունը վճարվելու են անկանխիկ եղանակով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նպաստ ստացող անձը հանդիսանում է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ տարեց անձ, ապա, դիմումի հիման վրա, վճարումը կարող է շարունակվել կանխիկ եղանակով՝ «Հայփոստի» միջոցով:

2023 թվականի հուլիսի 1-ից հետո այն ընտանիքները, որոնք դեռ դիմում չեն ներկայացրել վճարման եղանակի փոփոխության համար, տվյալ ընտանիքի նպաստի վճարման եղանակը ծրագրային գործիքի կիրառմամբ դառնալու է անկանխիկ, իսկ բանկն ընտրվելու է պատահականության սկզբունքով՝ հաշվի առնելով տվյալ բնակավայրում անկանխիկ նպաստ ստացող ընտանիքների համամասնությունները՝ ըստ վճարող բանկերի:

Քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում նպաստ ստացող ընտանիքների չափահաս անդամներից որեւէ մեկը կարող է մինչեւ 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ վճարման եղանակի փոփոխության դիմում ներկայացնել բնակության վայրը սպասարկող տարածքային կենտրոն՝ հետագայում համակարգի կողմից ընտրված բանկի մասին տեղեկատվություն ստանալու՝ առաջացող հերթերից խուսափելու համար:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՄԵՆԱՀԱՋՈՂՎԱԾ ՈՒ ՏՊԱՎՈՐԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

SIOP նախագահն ուրախությամբ նշեց, որ հայաստանյան համաժողովն իր մասնակցածներից ամենահաջողվածն ու տպավորիչն էր:

Ավարտվեց Երեւանում անցկացվող Մանկական ուռուցքաբանության միջազգային միության ասիական 15-րդ համաժողովը (SIOP Asia 2023 XV Congress): SIOP նախագահ Գիլերմո Շանտադան (Guillermo Chantada) միջոցառման ավարտին նշեց, որ հայաստանյան համաժողովն իր մասնակցածներից ամենահաջողվածն էր, ուր ամեն մանրուք հաշվի էր առնված, եւ այստեղ մեծ ուշադրություն էր հատկացված մարդկային կողմին. մասնակիցների համար ապահովված էին բոլոր պայմանները թե՛ գիտական հատվածի արդյունավետության եւ թե՛ երկրի բժշկագիտական ներուժին ծանոթանալու համար:

Համաժողովի մասնակիցների թիվը գերազանցեց 500-ը. մասնակցում էին թե՛ Հայաստան ժամանած, եւ թե՛ առցանց միացած մասնագետներ աշխարհի ամենատարբեր ծայրերից՝ԱՄՆ-ից, Չինաստանից, Ճապոնիայից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Նիդերլանդներից, Բելգիայից, Իսպանիայից, Լիբանանից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Չեխիայից, Լիտվայից, Շվեդիայից եւ այլ երկրներից:

Նրանց բոլորին միավորել էր մանկական քաղցկեղի դեմ համատեղ պայքարն ու կյանքեր փրկելու ձգտումը, մարդկանց բուժման ժամանակակից լուծումներով կիսվելու ու ոլորտը զարգացնելու ցանկությունը:

Որպես դրական արդյունք՝ քննարկվեցին բազմաթիվ կառույցների հետ համագործակցության հեռանկարային հնարավորություններ. շատերը նշում էին, որ կցանկանան իրենց պացիենտների/բուժառուների հետագա բուժումը Հայաստանում շարունակել եւ խորացնել փոխգործակցությունն այս ուղղությամբ: «Մենք պատվով ընդունեցինք համաժողովը Հայաստանում եւ հնարավորություն ստեղծեցինք տեղի մասնագետների եւ ուսանողների համար ծանոթանալու ոլորտի համաշխարհային անցուդարձին եւ զարգացումներին, «առաջին ձեռքից» լսելու ոլորտի լավագույններին:

Մյուս կողմից՝մեզ հաջողվեց միջազգային բժշկական հանրության շրջանում ճանաչելի դարձնել հայ տաղանդավոր բժիշկներին եւ բարձրացնել նրանց հեղինակությունը, ներկայացնել այն բժշկագիտական ներուժը, որ ունի Հայաստանն այս ոլորտում»,- նշեց Կոնգրեսի կազմկոմիտեի նախագահ, Հայաստանի մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնի ղեկավար, ԵՊԲՀ մանկական ուռուցքաբանության եւ արյունաբանության ամբիոնի վարիչ, Իմունաուռուցքաբանության հետազոտական ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Գեւորգ Թամամյանը:

Կազմակերպիչների ջանքերի շնորհիվ՝ SIOP Asia 2023 համաժողովի մասնակիցներին շնորհվելու է 24 ՇՄՁ կրեդիտ Եվրոպական հավաստագրման խորհրդի (EACCME…) կողմից՝շարունակական մասնագիտական զարգացման համար: Ինչպես նշեցին բանախոսներից շատերը, ցածր եւ միջին եկամուտ ունեցող զարգացող երկրներում շատ սուր է մանկական քաղցկեղի դեմ պայքարը, եւ SIOP-ի նման կառույցներն աջակցում են գիտական, մասնագիտական փորձառության տարածմանն ու փորձի փոխանակմանը հատկապես այդ երկրներում: Ինչ վերաբերում է գիտական հատվածին, ապա առաջին օրը վերջերս Գետահովիտում հիմնադրված քաղցկեղ ունեցող երեխաների եւ նրանց ընտանիքների համար նախատեսված հոգեւոր-վերականգնողական կենտրոնում անցկացվեց Քաղցկեղը վերապրածների (Survivorship Symposium) վերաբերյալ սիմպոզիում: Այստեղ քննարկվեցին հիմնախնդիրներ, որոնց բախվում են թե՛ պացիենտները եւ թե՛ բժշկական անձնակազմը, նշվեց նման կենտրոնների առկայության կարեւորությունը ցանկացած երկրում:

Քաղցկեղի նախատրամադրվածությանը եւ իմունաուռուցքաբանությանն առնչվող եւ մի շարք այլ կարեւոր հարցեր մասնագետները քննարկեցին համապատասխան (Cancer Predisposition Symposium եւ Immuno-Oncology Symposium) սիմպոզիումների ընթացքում:

Քաջ հայտնի է հոգեբանների եւ սոցիալ-հոգեբանական անձնակազմի դերը քաղցկեղի բուժման ընթացքում. Սոցիալ-հոգեբանական սիմպոզիումը (Psychosocial Symposium) միավորել էր մասնագետների ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Հայաստանից՝ քննարկելու խնդիրներն ու դրանց հաղթահարման նոր մոտեցումները հոգեբանության մեջ: Քաղցկեղի պարագայում հոգեբանական աջակցությունը ոչ միայն բուժառուներին է խիստ անհրաժեշտ, այլ նաեւ նրանց հարազատներին ու բժշկական անձնակազմին՝ հաղթահարելու եւ հատկապես հուզական այրման չբախվելու համար: Սիմպոզիումներ անցկացվեցին՝նվիրված ռեգիստրներին (Registry symposium), վիրահատական (Surgical Treatment symposium) ու ճառագայթային բուժմանը (Radiotherapy Symposium), ինչպես նաեւ քույրական գործին: Վերջինիս շրջանում հաղթողներն անգամ ստացան կրթաթոշակներ լավագույն զեկույցների համար: Բացման արարողության ընթացքում կարեւորագույն իրադարձություններից էր Մանկական ուռուցքաբան արյունաբան, ոսկրածուծի փոխպատվաստման համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետ Լոուրենս Բ. Ֆոլկներին ԵՊԲՀ պատվավոր դոկտորի կոչման շնորհումը:

Պրոֆեսոր Ֆոլկների աջակցությամբ է Հայաստանում հիմնադրվել ալոգեն փոխպատվաստումը, ինչի շնորհիվ՝ Հայաստան ժամանած 4 երեխա արդեն իսկ լիովին ապաքինված վերադարձել են Աֆրիկա՝ իրենց հարազատների մոտ: սը «Մանկական ուռուցքաբանության ոլորտի կին առաջնորդ» SIOP ASIA 2023 15-րդ համաժողովի շրջանակում «Մանկական ուռուցքաբանության ոլորտի կին առաջնորդները» մրցանակն այս տարի շնորհվել է Հայաստանի մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնի Մանկական ուռուցքաբանության բաժանմունքի վարիչ, ԵՊԲՀ մանկական ուռուցքաբանության եւ արյունաբանության ամբիոնի դասախոս Լիլիթ Սարգսյանին եւ Կամբոջայում ճապոնական Heart մանկական բժշկական կենտրոնի մանկաբուժության տնօրեն Մարիկո Կակազուին: Համանուն խորագրով հանդիպմանը մայիսի 20-ին պատվաբեր այս մրցանակին արժանացած մասնագետները ներկայացրին իրենց պատմությունը, ոլորտում կատարած աշխատանքները:

Մարիկո Կակազուն ճապոնուհի է, որն արդեն հինգ տարի աշխատում է Կամբոջայում: «Այս մրցանակը նպատակ ունի ի ցույց դնելու փաստը, որ նույնիսկ այնպիսի ծանր մասնագիտության մեջ, ինչպիսին մանկական ուռուցքաբանությունն է, կան կանայք, ովքեր կարողացել են համատեղել ընտանիքը, աշխատանքը եւ հաջողություններ են արձանագրել: Եվ սա պետք է մոտիվացնի այն կանանց, որոնք այս ամենին թերահավատորեն են մոտենում», - իր խոսքում ընդգծեց Լիլիթ Սարգսյանը, որը նաեւ նշեց, որ Մանկական ուռուցքաբանության միջազգային միության կողմից անցկացվող միջոցառումը հնարավորություն տվեց մասնակիցներին ընդհանրացնելու, քննարկելու ոլորտի բոլոր ասպեկտները, ամրապնդելու կապերը եւ պատվով ներկայացնելու Հայաստանը աշխարհի տարբեր անկյուններից ժամանած բժիշկ-գիտնականներին: «Համաշխարհային առողջապահական համայնք» / Global Health Network հանրային միջոցառմանը պրոֆեսորներ Սքոթ Հովարդը (ԱՄՆ), Մարիկո Կակազուն (Կամբոջա) եւ Գիլերմո Շանտադան (Իսպանիա) խոսեցին իրենց փորձի եւ ոգեշնչման աղբյուրների մասին, այն մասին, թե ինչպես է հարկավոր ապրել՝ նպատակով, թե համակարգված, եւ այլ կարեւոր արժեքների մասին:

Ովքեր չհասցրին մասնակցել, կարող են դիտել ամբողջական ոգեշնչող տեսանյութը՝

https://www.youtube.com/watch?v=U7RxNWau8OA&t=1961s:

Համաժողովի ծրագրի մասին

Համաժողովը մայիսի 18-21-ը հյուրընկալել էր մանկական ուռուցքաբանության համաշխարհային առաջատար ավելի քան 200 խոսնակների, բժշկական եւ ուսումնական հաստատությունների ղեկավարների շուրջ 60 երկրներից, որոնք հանդես եկան ոլորտի ամենաարդի զարգացումների եւ թեմաների շուրջ զեկույցներով ու դասախոսություններով: Հարյուրավոր ականավոր բժիշկներ եւ գիտնականներ նաեւ ծանոթացան Հայաստանի բժշկագիտությանը, մասնագետներին, գիտական ներուժին ու ենթակառուցվածքներին՝ նորանոր հնարավորություններ ձեւավորելով տարաբնույթ համագործակցությունների հաստատման եւ զարգացման համար:

Հանրության համար ներառված էին նաեւ բաց եւ անվճար բացառիկ հանդիպումներ, սեմինար-քննարկումներ առողջության ու առաջնորդության վերաբերյալ՝

- «Մանկական ուռուցքաբանության ոլորտի կին առաջնորդները» /Women leadership in oncology,
- «Համաշխարհային առողջապահական համայնք» /Global Health Network
- Ի աջակցություն Մանկական ուռուցքաբանության միջազգային միության ասիական 15-րդ համաժողովի հանրայնացման՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագիրը՝ Երեւանի պետական բժշկական համալսարանում:

Միջոցառումների մասին

Մանկական ուռուցքաբանության միջազգային միությունն (SIOP) աշխարհում միակ կազմակերպությունն է, որն ամբողջությամբ նվիրված է մանկական եւ դեռահասների քաղցկեղի բոլոր ասպեկտների ուսումնասիրությանն ու բուժմանը, ինչպես նաեւ այդ ոլորտում գիտելիքների ավելացմանն ու զարգացմանը: Միության առաքելությունն է պայքարել, որ ոչ մի երեխա չմահանա քաղցկեղից: Այժմ քաղցկեղից ապրելիության ցուցանիշը Հայաստանում արդեն իսկ ձգտում է 75%-ի: Այս առաքելությանն էր նվիրված նաեւ 2023 թվականի համաժողովը, որի ընթացքում ելույթներով հանդես եկան համաշխարհային ճանաչում ունեցող ոլորտի մասնագետներ, կառույցների եւ գիտական հանձնաժողովների ղեկավարներ ողջ աշխարհից՝ ԱՄՆ-ից, Չինաստանից, Ճապոնիայից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Նիդերլանդներից, Բելգիայից, Իսպանիայից, Լիբանանից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Չեխիայից, Լիտվայից, Շվեդիայից եւ այլ երկրներից:

Համաժողովի օրակարգը բավականին հագեցած էր եւ ընդգրկում էր լայնամասշտաբ միջոցառումներ՝ 80+ սեմինարներ, քննարկումներ, աշխատարաններ (workshop), բանախոսություններ եւ սիմպոզիումներ՝ 260+ թեմաների շուրջ: Համաժողովի համակազմակերպիչներն էին Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, ՀՀ ԱՆ պրոֆ. Լ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնը, Հայաստանի մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնը, որը հանդիսանում է ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի մաս, Իմունաուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտը (IMMONC) եւ «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամը: Համաժողովն անց էր կացվում ՀՀ առողջապահության նախարարության աջակցությամբ: Համաժողովի գլխավոր հովանավորներն էին Agenus բիոտեխնոլոգիական ընկերությունը (ԱՄՆ) եւ Team Telecom Armenia ընկերությունը: Գործընկերներն էին Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնը, Արյունաբանության եւ ուռուցքաբանության հայկական ասոցիացիան, Հայաստանի մանուկների հիմնադրամը (COAF), Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամը (HFC), DNA Strategy խորհրդատվական գործակալությունը, Just Travel տուրիստական գործակալությունը, SODA դիզայն ստուդիոն: Ընկերներն էին Farma Mondo դեղագործական խումբը (Շվեյցարիա), Astex բիոտեխնոլոգիալան ընկերությունը (ԱՄՆ), «Ջվարթնոց» միջազգային օդանավակայան-«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն, «Գրանդ հոթել Երեւան» հյուրանոցը, «Սանոֆի», My child matters (Մայ չայլդ մեթըրս) նախաձեռնությունը:

*** Հայաստանի մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնի մասին՝

https://www.facebook.com/cancerarmenia

https://www.facebook.com/hematologycenterarmenia

Մանկական ուռուցքաբանության միջազգային միության մասին (SIOP)

Մանկական ուռուցքաբանության միջազգային միությունը (Societe Internationale d'Oncologie Pediatrique/International Society of Pediatric Oncology, SIOP) աշխարհում միակ միությունն է՝կազմված մանկական արյունաբանության/ուռուցքաբանության շուրջ 2600 մասնագետներից: Այն կազմավորվել է 1969 թվականի նոյեմբերի 6-ին՝որպես մասնագետների փոքր խումբ, Գուստավ-Ռուսիի ինստիտուտում, (IGR) Վիլժյուիֆ, Փարիզ, որի առաքելությունն էր զարգացնել քաղցկեղով հիվանդ երեխաների ուսումնասիրությունը եւ խնամքը, հիմնաքարային առաքելություն, որով առաջնորդվում են մինչ օրս:

Այսօր այս նպատակներն ընդլայնվել են՝ ընդգրկելով հիմնական հետազոտությունների, ինչպես նաեւ կլինիկական ուսումնասիրությունների արդիականացումը, բուժքույրերի, առողջապահական այլ մասնագետների եւ ծնողների ներգրավումը, ինչպես նաեւ ուսուցման եւ հանրայնացման ծրագրերի կազմակերպումը զարգացող երկրներում եւ հասարակություններում՝ ուղղված երեխաների վիճակի բարելավմանը:

SIOP-ի տեսլականն է՝ «ոչ մի երեխա չպետք է մահանա քաղցկեղից. բուժել շատերին, հոգ տանել բոլորի մասին»: SIOP-ն ունի մայրցամաքային մասնաճյուղեր Եվրոպայում, Ասիայում, Օվկիանիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում եւ Հյուսիսային Ամերիկայում:

https://siop-congress.org/about-siop/

https://siop-online.org/

https://siop-online.org/sp_cb/asia/

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ

ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԿԱՆՆ՝ ԻՐ «ՍԱԼԵՄ» ՖԻԼՄՈՎ

Ֆրանսահայ ռեժիսոր Ժան-Բեռնար Մառլինը 2018 թվականի Կաննի ֆեստիվալի շաբաթին մեծ աղմուկ էր բարձրացրել Մարսելում իր դեբյուտային՝ «Շեհերազադե» գեղարվեստական ֆիլմով, որը պատմում է երիտասարդ մարմնավաճառի եւ նախկինում կալանավորված անչափահասի հարաբերությունների մասին, որը դառնում է նրա կավատը:

Մառլինն այս տարի վերադառնում է Կանն իր երկրորդ գեղարվեստական ֆիլմով՝ «Սալեմ»-ով, որի համաշխարհային պրեմիերան տեղի կունենա «Հատուկ հայացք» ծրագրի շրջանակներում:

Ինչպես «Շեհերազադե»-ն, այնպես էլ այս ֆիլմը փաստագրական մոտեցմամբ ներկայացնում է Մարսելի տխրահռչակ, հանցագործ եւ աղքատ թաղամասերի իրականությունը, սակայն տարբերվում է նրանով, որ Մառլինը ֆանտազիայի մի շերտ է ավելացրել պատմությանը:

«Ես ոչինչ չեմ հորինում իմ ցուցադրածում, բայց միեւնույն ժամանակ այս ֆիլմը երեւակայության գործ է: Դա երազային ու ֆանտաստիկ հատկանիշներով այլաբանություն է»,- ասել է նա:

Ֆիլմը Կոմորացի դեռահաս Ջիբրիլի մասին է, որը առնչվում է մրցակից տարածքում ապրող գնչուհի աղջկա հետ: Երբ նա հղիանում է, Ջիբրիլը սկզբում խնդրում է նրան աբորտ անել՝ վախենալով, որ իրենց հարաբերությունները լարվածություն կբորբոքեն տեղական ավազակախմբերի միջեւ: Հետո նա ակամայից դառնում է ընկերոջ սպանության մեղսակիցը, որն անիծում է նրան նրա գրկում մահանալիս: Վնասվածքի ենթարկված Ջիբրիլը գալիս է այն եզրակացության, որ իր չծնված երեխան ունի բուժիչ ուժ, որը կփրկի իրեն եւ իր ողջ շրջակայքը սպասվող աղետից: Բանտում եւ հոգեբուժարաններում եւ այնտեղից դուրս նա վերամիավորվում է իր դստեր հետ՝ նրան եւս կլանելով իր կարողությունների մոլուցքով:

«Երեխան մտնում է հոր ներաշխարհ. դա փոխանցվում է նաեւ նրան: Փոխանցումը ֆիլմի առանցքային բառն է»,-ասում է Մառլինը:

Ռեժիսորն օգտագործել է իր մանկության փորձը դստեր վրա Ջիբրիլի ազդեցությունը նկարագրելու համար, բայց նաեւ նշել, որ այս պատմությունը հատում է իրականության եւ երեւակայության սահմանը: «Ես ուզում էի հանդիսատեսի մեջ կասկածի սերմ ցանել, թե արդյոք ամեն ինչ ճիշտ է: Ես փնտրում էի այս երկիմաստությունը տարօրինակի եւ հրաշալիի միջեւ»:

«Գաղափարն այն էր, որ ֆիլմը մի քիչ նմանվի վավերագրության: Եթե անգամ այն շեղվեր դեպի ֆանտաստիկա, ես ուզում էի, որ այն հիմնված լիներ իրականության վրա,-ասել է հայկական ծագում ունեցող ռեժիսորը:- Մարսելը ներգաղթի քաղաք է: Բոլորն էլ օտար ծագում ունեն, եւ մենք մեծանում ենք այս մշակութային բազմազանությամբ»:

Ինչպես «Շեհերազադե»-ում, այնպես էլ այս ֆիլմում ներառված է սիրողական դերասանական կազմ: Մառլինը 10 ամիս է ծախսել՝ ամբողջ Մարսելից հավաքագրելով ոչ պրոֆեսիոնալ դերասանների, իսկ հետո՝ եւս հինգ ամիս փորձեր արել եւ դերերը բաշխել նրանց միջեւ:

«Ես անմիջապես չկողմնորոշվեցի դերերի հարցում. սեմինարներ արեցի, որտեղ մենք ծանոթացանք միմյանց հետ եւ խաղացինք տարբեր տեսարաններ՝ տեսնելու, թե ովքեր կարող են մարմնավորել առանցքային հերոսներին: Սա եւ՛ համատեղ աշխատանք է, եւ՛ զուտ գեղարվեստական: Հենց դա է ինձ հետաքրքրում ֆիլմում: Դա ո՛չ մեկն է, ո՛չ էլ մյուսը: Այս հիբրիդային մոտեցման կիրառումը եղել է ֆիլմի գլխավոր նպատակներից մեկը»,- ասել է ռեժիսորը:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱԶՆԱՎՈՒՐԻ ՔՈԼԵՋԸ ՏՈՆԵՑ ՇԱՆՍՈՆՅԵԻ 99-ԱՄՅԱԿԸ

Երեւանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի եւ արվեստի պետական քոլեջը մայիսի 22-ին մեծն շանսոնյեի 99-ամյակը նշեց գեղեցիկ համերգով: Քոլեջի սաները հետաքրքիր մեկնաբանություններով ներկայացրին Ազնավուրի երգերը, պատմեցին նրա կյանքի հիշարժան դրվագների մասին:

Քոլեջի տնօրեն Վրեժ Կիրակոսյանն ընդգծեց՝ քոլեջի 700 սաներն ու 200 աշխատակիցները կարող են փաստել, որ այն օրվանից, երբ քոլեջը սկսեց կրել Շառլ Ազնավուրի անունը, այն վերելքներ է ապրում: «Այս դժվար ժամանակներում մենք լծված ենք երիտասարդներին ինքնահիրացվելու հնարավորություն տալու գործին: Հայերն աշխարհին այնպիսի մեծեր են տվել, ինչպիսիք են Կոմիտասը, Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Շառլ Ազնավուրը եւ այլք: Վստահ եմ, որ տարիներ անց այս քոլեջից եւս մեծեր են դուրս գալու»,-նշեց Կիրակոսյանը:

Նրա խոսքով՝ քոլեջին շատ են աջակցում Ազնավուրի ընտանիքն ու «Ազնավուր» հիմնադրամը: Նրանք ոչ միայն ֆինանսապես, տեխնիկապես, կրթական ծրագրերի առումով ներդրում ունեն քոլեջի զարգացման գործում, այլեւ նրանց նախաձեռնությամբ քոլեջում վարպետության դասեր, սաների հետ հանդիպումներ են անցկացնում մշակույթի գործիչներ, որոնք ճանաչում ունեն աշխարհում: Երբ նման մարդիկ գալիս են Հայաստան, հիմնադրամի շնորհիվ այցելում են նաեւ քոլեջ: Քոլեջը պատվոգիր եւ «Ազնավուր» կրծքանշան հանձնեց հիմնադրամին՝ իրենց սատարելու համար:

Պատվոգիր եւ քոլեջի ոսկե մեդալ տրվեց նաեւ Գագիկ Ծառուկյանին, որի ջանքերով քոլեջը ռոյալ է ձեռք բերել, ինչի կարիքը շատ է ունեցել: «Ազնավուր» հիմնադրամի գործառնությունների ղեկավար Տաթեւիկ Սարգսյանն էլ հիշեցրեց, որ հիմնադրամը ստեղծվել է առաջին հերթին Ազնավուրի հումանիտար գործունեությունը շարունակելու համար՝ իրականացնելով սոցիալական եւ զարգացման ծրագրեր, այդ թվում՝ մշակույթի ու կրթության բնագավառում, սակայն Ազնավուրի արվեստի պահպանումն ու տարածումը եւս հիմնադրամի առաքելության կարեւոր մասն է:

«Հաջորդ տարի Ազնավուրի 100-ամյակն է, եւ հիմնադրամը մի շարք հետաքրքիր միջոցառումներ կիրականացնի Հայաստանում եւ Ֆրանսիայում, որոնց մասին դեռ կհայտնենք: Այս փուլում աշխատում ենք Հայաստանի եւ Ֆրանսիայի կառավարությունների հետ, որպեսզի մշակենք հանրությանը հասանելի միջոցառումների փաթեթ»,- շեշտեց Սարգսյանը: Ըստ նրա՝ Ազնավուրն այնքան մեծ է, որ յուրաքանչյուրը կարող է գտնել իր Ազնավուրին՝ Ազնավուր երաժշտին, Ազնավուր դերասանին, Ազնավուր գրողին:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ

Երաժշտական երկարատեւ դադարից հետո դերասան, պրոդյուսեր եւ երգիչ Արման Նշանյանը նոր տեսահոլովակ է ներկայացրել՝ Մարինե Ալեսի «Միեւնույնն է, գարուն է» լիրիկական ստեղծագործությունը, որն ուղեկցվում է նույնքան հանդարտ ու պարզ տեսահոլովակով: Այն նկարահանված է Երեւանում, իսկ ռեժիսորը Օլգա Մուրադյանն է: Երգի գործիքավորումը կատարել է Անդրանիկ Բերբերյանը: Տեսահոլովակը YouTube-ում տեղադրվել է մայիսի 23-ին:

ՉԻ ՄՏԱԾՈՒՄ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անգլիայի չեմպիոնի տիտղոսը երրորդ տարին անընդմեջ նվաճած «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան վստահեցրել է, որ հաջորդ մրցաշրջանում էլ կմնա պաշտոնում, թեեւ Անգլիայի Պրեմիեր լիգան ակումբի դեմ ներկայացրել է ֆինանսական արդար խաղի բազմաթիվ խախտումների վերաբերյալ մեղադրանքներ:

«Ես հաջորդ մրցաշրջանում էլ կմնամ «Մանչեսթեր Սիթիում»: Ես չեմ մտածում ակումբից հեռանալու մասին: Ես կմնամ այստեղ նույնիսկ հարյուրավոր խախտումների վերաբերյալ մեղադրանքների դեպքում: Մի՛ անհանգստացեք, ես կլինեմ այստեղ»,- Գվարդիոլայի խոսքը մեջբերում է BBC-ն:

Գվարդիոլան «Մանչեսթեր Սիթին» գլխավորում է 2016 թվականից՝ 5 անգամ հռչակվելով Անգլիայի չեմպիոն:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԻ ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ֆրանսիայի հավաքականի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեն չի երկարաձգել պայմանագիրը փարիզյան ակումբի հետ մինչեւ 2025թ. հունիս. հաղորդում է ֆրանսիական L'Equipe-ը: Այդպիսի հնարավորություն կար գործող պայմանագրով: Հաջորդ ամռանը Մբապեն կստանա ազատ գործակալի կարգավիճակ եւ կկարողանա անվճար հեռանալ ՊՍԺ-ից: Այդուամենայնիվ, ՊՍԺ-ն մտադիր չէ այս ամռանը վաճառել Մբապեի տրանսֆերը: Հաջորդ տարի կողմերը կբանակցեն նոր պայմանագրի շուրջ: Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն ՊՍԺ-ի հետ մասնակցել է 41 հանդիպման, խփել է 40 գոլ, կատարել 9 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Մբապեի տրանսֆերային արժեքը գնահատում է 180 միլիոն եվրո:

55 ՄԻԼԻՈՆ ՖՈՒՆՏ

«Մանչեսթեր Յունայթեդը» կփորձի ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ ձեռք բերել Լոնդոնի «Չելսիի» կիսապաշտպան Մեյսոն Մաունթին, որը մանչեսթերյան թիմի հոլանդացի գլխավոր մարզիչ Էրիկ տեն Հագի առաջնահերթությունն է կազմի ուժեղացման ուղղությամբ: Բանակցությունները կսկսվեն հունիսին: «Մանչեսթեր Յունայթեդն» Անգլիայի հավաքականի 24-ամյա խաղացողի համար կառաջարկի 55 միլիոն ֆունտ ստերլինգ: «Չելսին» Մաունթի տրանսֆերից ակնկալում է 85 միլիոն եվրո: Նրա ծառայություններով հետաքրքրված են նաեւ «Լիվերպուլն» ու Լոնդոնի «Արսենալը»: Մաունթի պայմանագիրը «Չելսիի» հետ նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս:

● *Մայիսի 26-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրային իրարանցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Սեփականության իրավունքով ինձ պատկանող ավտոմեքենան շահագործել եմ որպես տաքսի, սակայն ԱՊՊԱ պայմանագրում նշվել է, որ ավտոմեքենան շահագործվելու է անձնական նպատակներով: Տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով ես ճանաչվել եմ մեղավոր կողմ: Խնդրում եմ ասել՝ ինչ բացասական հետեւանքներ կարող են տեղի ունենալ:

Արման Ավետիսյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (Ապահովադրի) նկատմամբ, եթե վերջինս ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանը ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչեւ ապահովագրական պատահարը («Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 27-ի 2-րդ կետի դ ենթակետ):

Այս պարագայում, ավտոմեքենան որպես տաքսի շահագործելով, փոխվում է ապահովագրության ռիսկայնության աստիճանը: Այսինքն՝ ապահովագրական ընկերությունը տուժող կողմին ապահովագրական հատուցում տրամադրելուց հետո ձեզ է բերում հետադարձ պահանջի իրավունքը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ձեւի (նպատակի) փոփոխությունը համարվում է որպես վկայագրում նշված էական տեղեկատվության փոփոխություն:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե անհատ ձեռնարկատերը ներմուծված օծանելիքի դրոշմավորման համար ձեռք է բերել դրոշմապիտակներ, որոնց մի մասը չի օգտագործել, ապա կարո՞ղ է արդյոք դրանք ետ վերադարձնել:

Տիգրան Մանուկյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տ. Մանուկյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.6 հոդվածի համաձայն՝ ձեռք բերված եւ չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են մաքսային մարմին՝ համապատասխան ներմուծումը դադարեցնելու ամսվան հաջորդող եռամսյա ժամկետում:

Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձման համար տնտեսավարող սուբյեկտները հարկային կամ մաքսային մարմին են ներկայացնում դիմում՝ նշելով դրոշմապիտակների վերադարձման պատճառները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ վնասված դրոշմապիտակները սույն հոդվածով սահմանված կարգով եւ դեպքերում վերադարձվում են հարկային մարմին՝ յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով, մինչեւ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ինչո՞վ է զբաղված Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանը, երբ վարչական շրջանի գրեթե բոլոր բակերում աղբն այս վիճակում է:

ArmLur.am-ը, ուսումնասիրելով Ռոման Համբարձումյանի պաշտոնական էջը, նկատում է, որ այնտեղ ցուցադրական հրապարակումներ են՝ բակ է բարեկարգում, ծառ է տնկում, բայց աղբ է լցված ողջ վարչական շրջանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+6 +11 +18 +21
	Կոտայքի լեռներ	+6 +10 +18 +20
	Կոտայքի նախալեռներ	+11 +14 +20 +24
	Գեղարքունիք	+6 +11 +17 +20
	Լոռի	+8 +12 +24 +27
	Տավուշ	+10 +14 +26 +30
	Արագածոտնի լեռներ	+6 +8 +16 +19
	Արագածոտնի նախալեռներ	+13 +15 +22 +26

	Արարատ	+15 +17 +26 +29
	Արմավիր	+11 +13 +26 +28
	Վայոց ձորի լեռներ	+5 +8 +19 +21
	Վայոց ձորի նախալեռներ	+5 +8 +28 +30
	Սյունիքի հովիտներ	+14 +17 +27 +31
	Սյունիքի նախալեռներ	+7 +10 +21 +25
	Արցախ	+15 +18 +27 +31
	Երեւան	+12 +14 +26 +28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*